

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2021թ. գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

06 ապրիլի 2021թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 24 անդամներից 16–ը (ներկայաթերթիկը կցված է):

Նախագահ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ., պրոֆ. Ա. Սադյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ. Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի վարիչի մրցութային ընտրության անցկացում: Զեկուցող՝ Ա. Սադյան

2. Ընթացիկ հարցեր:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

Լսեցին՝

1. Ֆարմացիայի ինստիտուտի «Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման» ամբիոնի վարիչի թափուր տեղի համար հայտարարված մրցութի անցկացման հարցը:

Ելույթ ունեցան՝

Նիստի նախագահ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սադյանը, գիտխորհրդի անդամներ՝ ք.գ.թ. Ս. Վարդապետյանը, ք.գ.թ. Ս. Ափոյանը և ք.գ.թ. Ա. Մկրտչյանը:

Ելույթ ունեցողները նշեցին, որ «Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման» ամբիոնի վարիչի թափուր տեղի համար դիմել է կենսաբանական գիտությունների թեկնածու դոցենտ Անահիտ Մխիթարի

Հովհաննիսյանը: Ա. Մկրտչյանը տեղեկացրեց, որ թեկնածուի բացակայությունը նիստին պայմանավորված է կորոնավիրուսային համավարակով: Նիստի անդամները բացակայությունը համարեցին հարգելի:

Ս. Վարդապետյանը տեղեկացրեց, որ Ա. Ս. Հովհաննիսյանի կողմից ներկայացվել են բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը: Մրցույթին մասնակցող թեկնածուի գիտական կոչումը, աշխատանքային ստաժը և գիտամանկավարժական գործունեությունը համապատասխանում են հայցվող պաշտոնի համար ներկայացվող բոլոր պահանջներին:

Ֆարմացիայի ինստիտուտի գիտական և ներդրումային հարցերի գծով փոխսնօրեն Ա. Մկրտչյանը նշեց, որ համաձայն ներկայացված փաստաթղթերի, Ա.Ս. Հովհաննիսյանի թեկնածությունը քննարկվել է Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնում, ինչպես նաև մրցութային հանձնաժողովում: Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնը և մրցութային հանձնաժողովը երաշխավորել են նրան՝ հայտարարված մրցույթին մասնակցելու համար:

Ա.Ս. Հովհաննիսյանը հեղինակ է ավելի քան 40 գիտական հոդվածների, որոնցից 6-ը՝ բարձր ազդեցության գործակից ունեցող գիտական հանդեսներում և 12 միջազգային գիտաժողովների զեկուցման թեզիսների: Վերջին 3 տարում հրատարակել է 7 գիտական հոդված, 6 թեզիս, 2 ուսումնական ձեռնարկ և 2 ուսումնամեթոդական աշխատանք:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են 15 մագիստրոսական թեզեր և 25 դիպլոմային աշխատանքներ: Վերջին երկու տարում դասախոսը ուսանողի աչքերով սոց. հարցման միջին միավորը կազմում է 4.55:

Անահիտ Հովհաննիսյանը 2011թ. սեպտեմբերից (2011-2016թթ.) մասնակցել է ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի առաջին, ինչպես նաև 2016թ. սեպտեմբերից երկրորդ փուլին (2016-2021թթ.): Առաջին փուլում հավաքելով 32 կրեդիտ և երկրորդ փուլում 45 կրեդիտ (ծրագրով պահանջում է 30 կրեդիտ):

Առաջարկվեց Ա.Ս. Հովհաննիսյանի անունը ներառել քվեաթերթում՝ Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի

վարիչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի փակ գաղտնի քվեարկության անցկացման համար:

Բաց քվեարկությամբ գիտական խորհուրդը (միաձայն) որոշեց մրցույթի մասնակից Ա.Մ. Հովհաննիսյանին երաշխավորել Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի վարիչի պաշտոնում ընտրվելու համար և նրա անունը մտցնել փակ գաղտնի քվեարկության քվեաթերթի մեջ:

Փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու համար որոշվեց ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով.

Նախագահ՝ Ռ. Ա. Հովհաննեսյան

անդամներ՝ Ս.Ղ. Պետրոսյան

Ա.Ա. Խաչատրյան:

Ընտրություններից հետո Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի անդամները (24-անդամներից ներկա էին 16-ը) լսեցին հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունն, ըստ որի փակ գաղտնի քվեարկությանը մասնակցել են խորհրդի 16 անդամներ: Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոն վարիչի պաշտոնը զբաղեցնելու համար Ա. Մ. Հովհաննիսյանին կողմ են քվեարկել գիտխորհրդի 16 անդամ, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթ՝ 0:

Որոշեցին՝ Գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ որոշեց հաստատել հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը և Ա.Մ. Հովհաննիսյանին համարել ընտրված Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի վարիչի պաշտոնում:

4. Ընթացիկ հարցեր:

Նիստում ընթացիկ հարցեր չեն քննարկվել:

Գիտական խորհրդի նախագահ՝

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Ա. Սաղյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ ք.գ.թ.

Ա. Դադայան